ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 03.07.2025թ. ԹԻՎ 580-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

16.07.2025թ.
ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ
Վ. Մուրադյան Կապի ծառ. ռադիոկապի գլխ. մասնագետ
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Մ. Նազարյան Կապի ծառ. առաջին կարգի ինժենր
Է. Հակոբյան Կապի ծառ. ավագ ինժենր
Հանձնաժողովի բացող անդամներ
Հ. Սարգսյան Կապի ծառ. վերգետնյա կապի գլխ. մասնագետ
Կ. Սրապյան Կապի ծառ. ավագ ինժեներ
Հանձնաժողովի քարտուղար
Անահիտ Կարապետյան

Օրակարգ

1. *ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-26/25* ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից՝ <<SAF TEHNIKA>> ԲԸ կողմից ներկայացված հայտի գնահատում:
Հանձնաժողովը հայտի գնահատման արդյունքնում արձանագրեց անհամապատասխանություն՝ հավելված 1.3 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև) 1.3.3 տողը՝(Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը) ստորագրված չէր մասնակցի կողմից:

Արձանագրվեց նաև, որ մասնակցի մասով ուսումնասիրվել են gnumner.am կայքում առկա <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի չունեցող մասնակիցների>> ցանկը, ինչպես նաև <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց>> ցուցակը և մասնակցելու իրավունքի հետ կապված խախտումներ հայտնաբերված չեն:

Քննարկումների արդյունքում հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետը (Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները) և 8.10 կետը(Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է <u>անբավարար և մերժվում է</u>...)՝

Հանձնաժողովը որոշեց

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում (17.07.2025թ.) շտկել անհամապատասխանությունը:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 18.07.2025թ-ին ժամը 10.00-ին:

Հանձնաժողովի նախագահ		Վ. Մուրադյան
Հանձնաժողովի անդամ		Մ. Նազարյան
Հանձնաժողովի անդամ		Է. Հակոբյան
Հանձնաժողովի անդամ		Հ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամ		Կ. Սրապյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Կարապետյան